ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"29." հունվարի 2024թ. N.....11-Հ.....

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-Ի N 26-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, <<Պետական կառավարման համակարգի մարմինների մասին>> օրենքի 7-րդ հոդվածի 12-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 13-րդ ենթակետը և նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի 2024 թվականի հունվարի 26-ի N 42/45.6/3180-2024 գրությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 15-ի <<Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հաստիքացուցակը հաստատելու մասին>> N 26-Լ հրամանով հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հրամանի հավելվածի <<2. Տարածքային կառավարման վարչություն>> բաժնի <<3) Համայնքային ծառայության հարցերի բաժին>> ենթաբաժնի <<ավագ մասնագետ 2>> տողը փոխարինել <<ավագ մասնագետ 3>> տողով և <<մասնագետ 2>> տողը փոխարինել <<մասնագետ 1>> տողով:

1/29/2024

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: SANOSYAN GNEL 1710830069 **Գ. ՍԱՆՈՍՅԱՆ**

ք. Երևան